«Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ) հետ համագործակցության շրջանակներում Հայաստանի հանրային հեռուստաընկերության ենթակառուցվածքների ապահովում (5-րդ փուլ)» դրամաշնորհային ծրագիր

Տիտղոսաթերթ

Կազմակերպության անունը	«Հայաստանի Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Հապավումը (եթե առկա է)	ՀՀ
Ծրագրի անվանումը	«Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ) հետ համագործակցության շրջանակներում Հայաստանի հանրային հեռուստաընկերության ենթակառուցվածքների ապահովում (5-րդ փուլ)»
Ծրագրի սկիզբ / ավարտ (օր/ամիս/տարի)	01 հունվար 2026թ. - 01 Հոկտեմբեր 2026թ.
Ծրագրի իրականացման վայրը/ աշխարհագրությունը (մարզ, համայնք)	ՀՀ, Ք. Երևան, Գ. Հովսեփյան 80 և ՀՀ, Ք. Երևան, Գ. Հովսեփյան 26 հասցեներ Ծրագրով նոր՝ 8-րդ տաղավարի /Հեռուստաստուդիայի/ կառուցման համար, ՀՀ Կառավարության 01.10.2015թ. N 1128-Ա որոշման համաձայն, «Հայաստանի Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին հատկացվել է 1.4 հա հողամաս՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Նորք Մարաշ, Գ. Հովսեփյան փողոց, թիվ 80 հասցեում: Այն հանդիսանում է «Հայաստանի Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի սեփականությունը և գտնվում է ներկայումս զբաղեցված տարածքի հարակից հատվածում: Հատկացված հողամասում, նոր կառուցվող տաղավարի դիզայն-նախագծի քննարկումների արդյունքում, Չինական կողմի հետ համատեղ հաստատվել է նաև Չինական կողմի պատասխանատվությամբ կառուցապատման տարածքը /Շինհրապարակը/՝ 7128 մ2 մակերեսով: Որոշ ենթակառուցվածքների ապահովման նպատակով օգտագործվելու են նաև «Հայաստանի Հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության ք. Երևան, Նորք Մարաշ, Գ. Հովսեփյան փողոց, թիվ 26 հասցեում ներկայումս զբաղեցրած հողամասի /ճանապարհների և ենթակառուցվածքների կառուցման և/կամ համատեղման համար/ և շենք-շինությունների տարածքներ /մասնավորապես՝ «Խմբագրություն» մ/շ-ի կիսանկուղային հարկում տեղակայվելու է Չինական կողմին տրամադրվող պահեստային տարածքը և կաթսայատունը/:
Կազմակերպության ղեկավար (անուն, հեռախոս, էլ. փոստ)	Գործադիր տնօրեն Հ. Մովսիսյան, Հեռ: 650015 Էլ փոստ: hovhannes.movsisyan@1tv.am
Ծրագրի ղեկավար/համակարգող (անուն, հեռախոս, էլ. փոստ)	Ռուբեն Շահինյան Հեռ: 650015 Էլ. Փոստ: ruben.shahinyan@1tv.am
Կազմակերպության գործունեության հասցեն և կոնտակտային տվյալները (հեռախոս, ֆաքս և էլ.փոստ)	Ք.Երևան, Գ.Հովսեփյան 26 Հեռ: 650015 էլ փոստ:
Ծրագրի բյուջե (ՀՀ դրամ)	**152 434 900** ՀՀ դրամ

Համառոտագիր

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Կառավարության միջև 2021 թվականի նոյեմբերի 15-ին ստորագրվել է «Տեխնիկատնտեսական համագործակցության մասին» համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր) ՝ «Հայաստանի Հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության համար նոր՝ 8-րդ հեռուստատաղավարի կառուցման, այդ թվում նաև՝ կողմերի համաձայնությամբ այլ նախագծերի քննարկման և իրականացման նպատակով:

Համաձայն վերը նշված Համաձայնագրի 1-ին հոդվածի 2-րդ պարբերության՝ ծրագրի շրջանակներում հստակ հարցերը սահմանվել են «Հայաստանի Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ և Չինական «IPPR միջազգային ինժեներինգային» ընկերությունների միջև 28.10.2022թ. ստորագրված՝ 8-րդ հեռուստաստուդիայի կառուցման դիզայն-սխեմայում և սույն թվականի հունիսի 2-ին հայկական և չինական կողմերի միջև լրացուցիչ ստորագրված՝ «Հայաստանի Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի նոր՝ 8-րդ տաղավարի կառուցման նախագծի իրականացման պայմանագրում (այսուհետ՝ Իրականացման պայմանագիր):

Հեռուստաստուդիայի էսքիզային նախագծի կազմման, հիմնական մասնաշենքի նախագծման և կառուցման աշխատանքները, Համաձայնագրի համաձայն, իրականացնելու է Չինական կողմը՝ համապատասխան մասնագետների միջոցով և Չինական ստանդարտներին համապատասխան: Հայկական կողմը, կամ այս պարագայում՝ «Հայաստանի Հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/, պարտավոր է Չինական կողմին տրամադրել նախագծերի կազմման և շինարարության իրականացման համար անհրաժեշտ ելակետային տվյալները /սեյսմիկ, հիդրոօդերևութաբանական, երկրաբանական, բնապահպանական և այլն/, ապահովել ծրագրի իրականացման համար բոլոր անհրաժեշտ թույլտվությունները և համաձայնեցումները, կառուցել և/կամ տրամադրել բոլոր օժանդակ կառույցները և ենթակառուցվածքները /ճանապարհներ, կաթսայատուն, անցակետ, ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրամատակարաման, կապի և այլ անհրաժեշտ համակարգեր/, բարեկարգել տարածքը:

Ներկայումս, հիմք ընդունելով Իրականացման պայմանագիրը, Կողմերն իրականացնում են Ընկերության նոր՝ 8-րդ տաղավարի (այսուհետ՝ Տաղավար), վերջինիս օժանդակ կառույցների և ենթակառուցվածքների շինարարության նախապատրաստական աշխատանքները:

Մասնավորապես սույն ծրագրի շրջանակներում վերոնշյալ աշխատանքներից նախատեսվում է իրականացնել «ՇՀԿ-ի տնակ» մ/շ-ից և Դավիթ Բեկի փողոցից դեպի շինհրապարակ ճանապարհի մի մասի շինարարական աշխատանքներ, «ՇՀԿ-ի տնակ» մ/շ-ից և Դավիթ Բեկի փողոցից դեպի նոր հեռուստաստուդիայի մասնաշենք կոյուղատարի կառուցման, բարեկարգման (ցանկապատ, ներքին ոռոգման ցանց, լուսավորություն և այլն), գլխավոր մասնաշենքից և Դավիթ Բեկի փողոցից դեպի նոր հեռուստաստուդիա ջրագծի մի մասի տեղադրման, դեպի նոր հեռուստաստուդիա ջերմատարի կառուցման, հեղեղատարերի կառուցման, տեխնիկական կոմունիկացիաների (ինտերնետ, հեռախոսային կապ, տարածքի անվտանգություն) կառուցման, չինական կողմի աշխատուժի ժամանակավոր կացարանի տեղակայման նպատակով տարածքի վարձակալության, ինտերնետ կապի մատակարարման աշխատանքներ:

Ծրագրի նկարագրություն

Ելնելով հեռուստահաղորդումների արտադրության նկատմամբ Հայկական կողմի պահանջներից՝ նոր Տաղավարի 1000 քմ մակերեսով դահլիճ-ստուդիան կարող է օգտագործվել լայնաֆորմատ մինչև 400 հանդիսատես ներգրավելու հնարավորությամբ ժամանցային, համերգային և այլ տիպի հաղորդումների արտադրության և ուղիղ հեռարձակման համար, ինչը կնպաստի օրիգինալ սեփական հեռուստահաղորդումների արտադրության ծավալների աճին:

Սույն ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ստորև նշված աշխատանքները.

«ՇՀԿ-ի տնակ» մ/շ-ից և Դավիթ Բեկի փողոցից դեպի շինհրապարակ ճանապարհի մի մասի շինարարական աշխատանքներ ինչը ներառում է, ճանապարհի պատվածքի կառուցում մոտ 1600 մ2, 370 գծմ բազալտե եզրաքարերի (150x300մմ) տեղադրում, մոտ 460 գծմ բետոնե եզրաքարերի (80x200մմ) տեղադրում, մոտ 390մ2՝ մայթերի կառուցում՝ ներառյալ տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերում.

«ՇՀԿ տնակ» մ/շ-ից դեպի շինհրապարակ և Դավիթ Բեկի փողոց մոտ 150 մետր երկարությամբ կոյուղատարի կառուցման աշխատանքներ՝ ներառյալ տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերում:

Բարեկարգման աշխատանքներ, ինչն իրենից ներկայացնում է մոտ 130 մետր երկարությամբ ցանկապատի, կանաչ տարածքների ոռոգման համար մոտ 1480մ ոռոգման համակարգի, ինչպես նաև արտաքին լուսավորության աշխատանքների համակարգի կառուցման աշխատանքներ՝ ներառյալ տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերում:

Գլխավոր մասնաշենքից և Դավիթ Բեկի փողոցից դեպի նոր հեռուստաստուդիա ջրագծի մի մասի մոտ 170 մետր երկարությամբ տեղադրման աշխատանքներ՝ ներառյալ տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերում:

Նոր հեռուստաստուդիայի մասնաշենքի տաք ջրամատակարարումն ապահովելու նպատակով մոտ 100 մետր երկարությամբ նոր ջերմատարի կառուցման և միացման աշխատանքներ՝ ներառյալ տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերում:

Նոր հեռուստաստուդիայի մասնաշենքից դեպի Դավիթ Բեկ փողոցով անցնող հեղեղատարին միացնելու նպատակով մոտ 130 մետր երկարությամբ նոր հեղեղատարի (ներառյալ հեղեղատար կոյուղու խողովակաշարի վրա մնացած դիտահորերի կառուցում և կարգաբերում) կառուցման աշխատանքներ՝ ներառյալ տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերում:

Արտաքին տեսահսկման ցանցի տեղադրման աշխատանքներ՝ թվով 37 հատ տեսախցիկների /առանց լրակազմի/ տեղադրման, ինտերնետ կապի ապահովման նպատակով մոտ 1500 մ օպտիկամանրաթելքային մալուխի անցկացման և հեռախոսային կապի ապահովման նպատակով մոտ 1000 մ երկարությամբ CAT6 ցանցային մալուխի անցկացման աշխատանքներ, ներառյալ տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերում:

Ժամակավոր կացարանի (Քեմփ) 40ՄԲթ/Վ հզորությամբ ինտերնետային կապի ապահովման աշխատանքներ:

Ժամանակավոր կացարանի ապահովման նպատակով 4500քմ հողատարածքի վարձակալություն Երևանի քաղաքապետարանից:

Ծրագրի իրականացմամբ կստեղծվեն անհրաժեշտ նախադրյալներ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ) հետ համագործակցության շրջանակներում Հայաստանի հանրային հեռուստաընկերության ենթակառուցվածքների մի մասի լիարժեք ապահովման համար:

Կազմակերպության փորձառությունը

Սույն նախագծի շրջանակներում Հանրային հեռուստաընկերության հիմնական նպատակը ժամանակակից պահանջներին համապատասխանող նոր հեռուստաստուդիայի կառուցումն ու շահագործումն է, ինչը թույլ կտա տաղավարային նկարահանումներն իրականացնել առավել արդյունավետ ու տեխնիկապես հագեցված նկարահանման տաղավարում՝ դրանով իսկ լուծելով ներկայումս առկա արտադրական ծավալների պայմաններում տաղավարների անբավարարությունը:

2013թ.-ից սկսած Հանրային հեռուստաընկերությունը թե ՀՀ պետական բյուջեից, թե այլ աղբյուրներից ստացված դրամաշնորհների շրջանակներում իրականացրել է մի շարք մեծածավալ շինարարական աշխատանքներ, մասնավորապես.

- 2013-2018թթ. Ընթացքում ՀՀ պետական բյուջեից ստացված 821,364.0 հազ. դրամի շրջանակներում Ընկերության կողմից իրականացվել են «Արհեստանոց-պահեստ« մասնաշենքի վթարային հատվածի քանդման և «Երևան ստուդիա» մասնաշենքի կապիտալ հիմնանորոգման աշխատանքներ, Նոր կաթսայատան կառուցման, ջերմամատակարարման ներհիրապարակային և ներքին ցանցերի կապիտալ նորոգման աշխատանքներ, ԱՍԲ-1, ԱՍԲ-7 տաղավարների և «Երևան ստուդիա» մասնաշենքի տաղավարի և հարակից աշխատասենյակների օդափոխության, ջերմամատակարարման և սառնամատակարարման համակարգերի ներդրման աշխատանքներ, տարածքի բարեկարգման և բացօթյա ավտոկայանատեղիի կառուցման աշխատանքներ, Գլխավոր մասնաշենքի 2-րդ հարկի աջակողմյան հատվածում գտնվող Եթերային սարքասրահի վերանորոգման աշխատանքներ, Շարժական հեռուստակայանի ադմինիստրատիվ շենքի ուժեղացման, վերակառուցման, վերանորոգման, «ՇՀԿ տնակ» մասնաշենքի վերակառուցման, «Երևան» ստուդիա մասնաշենքի աջակողմյան հատվածի ուժեղացման և վերակառուցման աշխատանքներ, «Դեկորացիաների պահպանման պահեստ» մասնաշենքի մի հատվածի (նախկին ԱՍԲ-6) և վերնանցման ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, Գլխավոր մասնաշենքի 1-ին, 2-րդ և 3-րդ հարկերի չվերանորոգված հատվածների վերահատակագծման և ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, Գլխավոր մասնաշենքի արտաքին սանդուղքների կապիտալ վերակառուցման և վերանորոգման աշխատանքներ, գլխավոր մասնաշենքի նկուղային հարկի չվերանորոգված հատվածի (արխիվային աշխատասենյակներ) նորոգման աշխատանքներ,

Գլխավոր մասնաշենքի տանիքի նորոգման աշխատանքներ, «Երևան ստուդիա» մասնաշենքի հարակից տարածքի բարեկարգման շինարարական աշխատանքներ և այլ շինարարական աշխատանքներ,

- 2022թ. Հանրային հեռուստաընկերության կողմից ներգրավված եկամուտների հաշվին իրականացվել են շինարարական աշխատանքներ՝ «Երևան Ստուդիա» մասնաշենքի 1-ին հարկի ուժեղացման և վերահատակագծման աշխատանքներ, ԱՍԲ-7 մասնաշենքի որոշ աշխատանքային տարածքների ընթացիկ նորոգման և մուտքի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ, Գլխավոր մասնաշենքի նկուղային հարկի ձախակողմյան միջանցքի չվերանորոգված հատվածի, նախամուտքի, ԱՍԲ-1 նկարահանման տաղավարի տեխնիկատաղավարային աշխատասենյակիների ընթացիկ նորոգման, ինչպես նաև հսկիչ անցագրային կետի ընթացիկ նորոգման աշխատանքներ, Գլխավոր մասնաշենքի հետնամասի հարթակի պարփակման աշխատանքների ձեռքբերման ծախսեր՝ 59,352.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով,

- 2023թ. ներգրավված այլ եկամուտների հաշվին իրականացվել է «Երևան ստուդիա» մասնաշենքի առաջին հարկի վերակառուցման ու վերահատակագծման և այլ ընթացիկ նորոգման աշխատանքներ՝ 149,129.0 հազ. դրամի ընդհանուր արժեքով,

- 2023թ. ՀՀ պետական բյուջեից հատկացված կապիտալ դրամաշնորհի հաշվին իրականացվել է Խմբագրություն (ԱՍԲ-7) մասնաշենքի հարակից կիսանկուղային տարածքի և կիսանկուղի տանիքի վերանորոգման աշխատանքների մի մասը՝ 48,366.3 հազ. դրամի ընդհանուր արժեքով:

- 2024թ. ՀՀ պետական բյուջեից հատկացված կապիտալ դրամաշնորհի հաշվին «Խմբագրություն ԱՍԲ-7» մասնաշենքի կիսանկուղի վերակառուցման աշխատանքներն իրականացվել են պայմանագրով սահմանված ծավալներով և ժամկետներում և ամբողջությամբ ավարտվել են՝ նախատեսված 540քմ աշխատանքների փոխարեն իրականացվել են մոտ 668քմ շինարարական աշխատանքներ: Իրականացվել են «ՇՀԿ-ի տնակ» մ/շ-ից և Դավիթ Բեկի փողոցից դեպի շինհրապարակ ճանապարհի մի մասի կառուցման աշխատանքները, մասնավորապես, նախատեսված 125 մետր ճանապարհի կառուցման փոխարեն իրականացվել է մոտ 700 խմ բետոնային աշխատանքներ՝ երկաթբետոնե հենապատերի կառուցման համար, ինչպես նաև կառուցվել է մոտ 140 մետր երկարությամբ երկաթբետոնե հենապատեր: Իրականացվել են նաև նոր կառուցվող (ԱՍԲ-8) մասնաշենքի էլեկտրամատակարարման նպատակով նոր կառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին պահուստային և հիմնական միացման աշխատանքների մի մասը, ձեռք են բերվել ԱՍԲ-8 հեռուստաստուդիայի և անհրաժեշտ ենթակառուցվածքների կառուցման շինարարության թույլտվություններ, բնապահպանական փորձաքննության և անտառատնկման աշխատանքների գծով տեխնիկական հսկողության ծառայություններ չինական կողմի աշխատուժի ժամանակավոր կացարանի (Քեմփ) տեղակայման նպատակով Երևանի քաղաքապետարանից հողատարածքի վարձակալության ծառայություններ, շինարարական հրապարակի անվտանգության ապահովման գծով տեխնիկական միջոցներ և արտադրատնտեսական գույք, չինական կողմի աշխատուժի ժամանակավոր կացարանի և ԱՍԲ-8 մասնաշենքի շինարարության հրապարակի էլեկտրաէներգիայի մատակարարման նպատակով տրանսֆորմատորային ժամանակավոր ենթակայան:

- 2025թ. ՀՀ պետական բյուջեից հատկացված կապիտալ դրամաշնորհի հաշվին իրականացվել են 350 մետր ընդհանուր երկարությամբ ճանապարհի կառուցման հողային աշխատանքներ, ինչը ներառել է նոր հեռուստաստուդիայի մասնաշենքը Դ. Բեկ փողոցին միացնող մոտ 150 մետր երկարությամբ ճանապարհի հողային աշխատանքների իրականացում, նոր հեռուստաստուդիայի մասնաշենքը «ՇՀԿ տնակ» մասնաշենքին կից հարթակին միացնող մոտ 110 մետր երկարությամբ ճանապարհի հողային աշխատանքների իրականացում, ինչպես նաև վերոհիշյալ երկու ճանապարհները միմյանց միացնող մոտ 90 մետր երկարությամբ ճանապարհի կառուցման հողային աշխատանքների իրականացում, մայթերի կառուցման աշխատանքների մի մասը, մասնավորապես՝ մոտ 130 գծմ բազալտե և մոտ 130 գծմ բետոնե եզրաքարերի տեղադրման աշխատանքներ (ներառյալ այդ մասով տեխնիկական ու հեղինակային հսկողության ծառայություններ):

- Իրականացվել են նաև «ՇՀԿ տնակ» մ/շ-ից և Դավիթ Բեկի փողոցից դեպի նոր հեռուստաստուդիայի մասնաշենք մոտ 415 մետր երկարությամբ կոյուղատարի կառուցման աշխատանքներ(ներառյալ տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայություններ):

- Գ. Հովսեփյան փողոցի հիմնական գազատարից ԱՍԲ-7 մասնաշենքում վերակառուցվող կաթսայատան գազամատակարարման ապահովման նպատակով իրականացվել է մոտ 116 մետր երկարությամբ արտաքին գազատարի կառուցման աշխատանքներ (ներառյալ այդ մասով տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայություններ):

- 2025 թվականի ընթացքում փաստացի իրականացվել են նոր հեռուստաստուդիայի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ին պատկանող տարածքների միջև մոտ 220 մետր երկարությամբ ցանկապատի կառուցման, ինչպես նաև հեռուստաստուդիայի տարածքների ոռոգումն ապահովելու նպատակով մոտ 150 խմ հողային աշխատանքներ:

- Իրականացվել է Դավիթ Բեկի փողոցով անցնող քաղաքային ցանցի ջրագծին միանալու համար մոտ 138 մետր երկարությամբ ջրագծի կառուցման, գործող պոմպակայանի ընթացիկ նորոգման, պոմպակայանից դեպի նոր հեռուստաստուդիայի մասնաշենք մոտ 310 մետր երկարությամբ ջրագծի կառուցման, ինչպես նաև պոմպակայանի կառուցման գծով միայն հողային աշխատանքները (ներառյալ այդ մասով տեխնիկական և հեղինակային ծառայություններՓաստացի իրականացվել է «Խմբագրություն» (ԱՍԲ-7) մասնաշենքում գործող կաթսայատան վերանորոգման աշխատանքներ, տեղադրվել են թվով 2 հատ կաթսաներ իրենց հիդրավլիկ հանգույցներով, իսկ նախատեսված ջերմատարի կառուցման համար իրականացվել են միայն հողային աշխատանքներ՝ մոտ 115 խ.մ.:

Իրականացվել է մոտ 380 մետր երկարությամբ նոր հեղեղատարի կառուցման և դիտահորերի մի մասի կառուցման աշխատանքներ: «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տարածքի ոռոգման նպատակով իրականացվել է Ընկերությանը հատկացված տարածքից մոտ 85 մետր երկարությամբ ոռոգման ցանցի վերատեղադրման աշխատանքներ:

Տեսահսկման համակարգի, ինտերնետային և հեռախոսային կապն ապահովելու կոմունիկացիաների կառուցման գծով իրականացվել են միայն հողային աշխատանքների և ճկախողովակների տեղադրման (մոտ 832 մետր երկարությամբ) աշխատանքների մեծ մասը՝ ներառյալ թվով 12 պլաստիկ դիտահորերի կառուցումը: Փաստացի իրականացվել է Ժամանակավոր կացարանի ջրամատակարարումն և կոյուղին ապահովելու նպատակով Գ. Հովսեփյան 26 հասցեի ջրամատակարարման ներքին ցանցից միացող մոտ 100 մետր երկարությամբ ջրագծի և Գ. Հովսեփյան փողոցով անցնող կոյուղատարին միացող մոտ 12 մետր երկարությամբ կոյուղատարի կառուցման աշխատանքներ:

Իրականացվել են նաև չինական կողմի աշխատուժի ժամանակավոր կացարանի (Քեմփ) տեղակայման նպատակով Երևանի քաղաքապետարանից հողատարածքի վարձակալության և ինտերնետային կապի մատակարարման ծառայություններ

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Հայաստանի հանրային հեռուստաընկերության ենթակառուցվածքների լիարժեք ապահովման հիմնական նպատակն է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հետ համագործակցության շրջանակներում ունենալ ամբողջությամբ նոր կառուցված հեռուստաստուդիա, ինչը ներառելու է նկարահանման տաղավար ու տեխնիկական համալիր՝ հագեցած նորագույն տեխնիկական սարքավորումներով, արտադրական ու վարչական տարածքներ, ինչը խիստ անհրաժեշտություն է Ընկերության գործունեության անընդհատ ընդլայնման շրջանակներում տաղավարային հաղորդումների նկարահանման պայմանների ապահովման համար: «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից ենթակառուցվածքների ապահովմամբ նախատեսվում է ամբողջությամբ շահագործել նոր կառուցված առանձին մասնաշենքն՝ իր նկարահանման տաղավարով, արդի նկարահանման սարքավորումներով ու առանձին արտադրական ու վարչական տարածքներով՝ դրանով իսկ լուծելով ներկայումս տաղավարային նկարահանման տարածքների անհրաժեշտության հարցը:

Սույն դրամաշնորհային ծրագիրը իրենից ներկայացնում է վերը նշված նախագծի 5-րդ փուլը, որի իրականացման արդյունքում նախատեսվում է ունենալ՝

«ՇՀԿ-ի տնակ» մ/շ-ից և Դավիթ Բեկի փողոցից դեպի շինհրապարակ ճանապարհի մոտ 1600 մ2 ճանապարհի պատվածք, (150x300մմ) մոտ 370 գծմ բազալտե եզրաքարեր, (80x200մմ) մոտ 460 գծմ բետոնե եզրաքարեր, մոտ 390մ2 մայթեր:

«ՇՀԿ տնակ» մ/շ-ից դեպի նոր հեռուստաստուդիայի մասնաշենք մոտ 150 մետր երկարությամբ կոյուղատար

Մոտ 130մ երկարությամբ մետաղական ճաղաշարով ցանկապատ: Կանաչ տարածքների ոռոգման համար մոտ 1480 մետր երկարությամբ տեղադրված խողովակներ: Արտաքին լուսավորության աշխատանքների համար լուսավորության թվով 16 տեղադրված հենասյուներ, ներառյալ լուսատու սարքերը:

Գլխավոր մասնաշենքից և Դավիթ Բեկի փողոցից դեպի նոր հեռուստաստուդիա մոտ 170 գծմ երկարությամբ տեղադրված ջրագիծ

Դեպի նոր հեռուստաստուդիա մոտ 100 գծմ երկարությամբ կառուցված և միացված ջերմատար

Նոր հեռուսստուդիայի մասնաշենքից դեպի Դավիթ Բեկ փողոցով անցնող հեղեղատարին միացնելու նպատակով կառուցված նոր հեղեղատար մոտ 130 մետր երկարությամբ.

Արտաքին տեսահսկման ցանց՝ թվով 37 հատ տեսախցիկներով/առանց իրենց լրակազմերի/ ինտերնետ կապի մատակարարման համար՝ անցկացված մոտ 1500 մ օպտիկամանրաթելքային մալուխ և հեռախոսային կապի ապահովման համար անցկացված մոտ մոտ 1000 մ երկարությամբ CAT6 ցանցային մալուխ

Ժամանակավոր կացարանի ապահովման նպատակով 4500քմ տարածքի վարձակալություն Երևանի քաղաքապետարանից

Ժամակավոր կացարանի (Քեմփ) 40ՄԲթ/Վ հզորությամբ ինտերնետային կապ

Գործողություններ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմակերպություն «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Ծրագիր «Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ) հետ համագործակցության շրջանակներում Հայաստանի հանրային հեռուստաընկերության ենթակառուցվածքների ապահովում (5-րդ փուլ)»
Ժամանակահատված 01.01.2026թ -01.10.2026թ

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս											
			1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	«ՇՀԿ-ի տնակ» մ/շ-ից և Դավիթ Բեկի փողոցից դեպի շինհրապարակ ճանապարհի մի մասի շինարարական աշխատանքներ	Գուրգեն Բեգլարյան, Մանգասար Պետրոսյան, Ռուբեն Շահինյան	X	X	X	X	X	X	X	X	X	X		
2	Կոյուղատարի կառուցում /«ՇՀԿ-ի տնակ» մ/շ-ից դեպի շինհրապարակ և Դավիթ Բեկի փողոց/	Գուրգեն Բեգլարյան, Մանգասար Պետրոսյան, Ռուբեն Շահինյան	X	X	X	X	X	X	X	X	X	X		
3	Բարեկարգման / ցանկապատ,ներքին ոռոգման ցանց, լուսավորություն և այլն/ աշխատանքների մի մասի իրականացում	Գուրգեն Բեգլարյան, Մանգասար Պետրոսյան, Ռուբեն Շահինյան	X	X	X	X	X	X	X	X	X	X		
4	Գլխավոր մասնաշենքից և Դավիթ Բեկի փողոցից դեպի նոր հեռուատաստուդիա ջրագծի մի մասի տեղադրման աշխատանքներ	Գուրգեն Բեգլարյան, Մանգասար Պետրոսյան, Ռուբեն Շահինյան	X	X	X	X	X	X	X	X	X	X		
5	Դեպի նոր հեռուստաստուդիա ջերմատարի կառուցման աշխատանքներ	Գուրգեն Բեգլարյան, Մանգասար Պետրոսյան, Ռուբեն Շահինյան	X	X	X	X	X	X	X	X	X	X		
6	Հեղեղատարերի կառուցում	Գուրգեն Բեգլարյան, Մանգասար Պետրոսյան, Ռուբեն Շահինյան	X	X	X	X	X	X	X	X	X	X		
7	Տեխնիկական կոմունիկացիաների /ինտերնետ, հեռախոս, տարածքի անվտանգություն/ մի մասի կառուցման աշխատանքներ	Գուրգեն Բեգլարյան, Մանգասար Պետրոսյան, Ռուբեն Շահինյան	X	X	X	X	X	X	X	X	X	X		
8	Ժամակավոր կացարանի (Քեմփ) ինտերնետային կապի մատակարարում	Գուրգեն Բեգլարյան, Մանգասար Պետրոսյան, Ռուբեն Շահինյան	X	X	X	X	X	X	X	X	X	X		
9	Չինական կողմի աշխատուժի ժամանակավոր կացարանի (Քեմփ) տեղակայման նպատակով հողատարածքի վարձակալություն	Գուրգեն Բեգլարյան, Մանգասար Պետրոսյան, Ռուբեն Շահինյան	X	X	X	X	X	X	X	X	X	X		

Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը

Ծրագրի շահառուն հանդիսանում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը:

Ռիսկերի գնահատում

- ՉԺՀ հետ համագործակցության շրջանակներում Հանրային հեռուստաընկերության համար նոր 8-րդ տաղավարի (հեռուստաստուդիա) կառուցման գծով չինական կողմի կողմից աշխատանքների համար սահմանված ժամկետների հետաձգում, երկարաձգում և/կամ դադարեցում,

- Նախագծի շրջանակներում Հանրային հեռուստաընկերության կողմից ձեռքբերումների գծով մրցութային ընթացակարգեր, մասնավորապես օրենքի շրջանակներում մրցույթների չեղարկում, կասեցում և կամ այլ եղանակով հետաձգում, ինչը կարող է հանգեցնել կանխատեսվող ժամկետներում սահմանված աշխատանքների ոչ պատշաճ իրականացմանը: Այս առչնությամբ Հանրային հեռուստաընկերությունը, կանխատեսելով ընթացակարգերի իրականացման օրենսդրությամբ սահմանված ժամկետները, կազմակերպում է սույն ընթակարգերը՝ հաշվի առնելով կանխատեսումային ժամկետները, ինչպես նաև մրցութային ընթացակարգերը կազմակերպելով գնումների օրենսդրության հստակ պահանջներով:

- Պայմանագրի կատարման փուլում մատակարար կազմակերպության կողմից պայմանագրով նախատեսված աշխատանքների ոչ պատշաճ կամ ժամանակին իրականացում, ինչը կարող է հանգեցնել նախատեսված ժամկետների հետաձգմանը: Այս առնչությամբ Հանրային հեռուստաընկերությունը նախատեսում է մատակարարի նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ՝ հիմք ընդունելով օրենսդրական իրավակարգավորումները:

Ծրագրի աշխատակազմը

Ստորև բերված է սույն դրամաշնորհային ծրագրում ներգրավվող աշխատակիցների ցանկը և վերջիններիս ինքնակենսագրականները՝ համապատասխան պատասխանատվությունների շրջանակներով.

1. Ռուբեն Շահինյան – Ծրագրի համակարգող
2. Գուրգեն Բեգլարյան – Ճարտարագետ-շինարար
3. Մանգասար Պետրոսյան–Նախապատրաստական աշխատանքների համակարգող

ՌՈՒԲԵՆ ՇԱՀԻՆՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2004-2009 թթ. – «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարան, Իրավագիտության ֆակուլտետ

1986-1996 թթ. – Երևանի թիվ 127 միջնակարգ դպրոց
2000-2002թթ. – Ծառայություն ՀՀ զինված ուժերում

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁ

2021թ. – առ այսօր
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Ռազմավարական ծրագրերի ղեկավար

- Հայ-չինական ծրագրով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության 8-րդ հեռուստաստուդիայի կառուցման աշխատանքների համակարգման և իրականացման ծրագրի ղեկավար
- Հայ-չինական համագործակցության ծրագրով ստեղծված հանձնաժողովի նախագահ

2008թ. – **առ այսօր**
«**Cinemart**» **պրոդյուսերական ընկերություն**
Հիմնադիր տնօրեն

- Մեդիա նախագծերի մշակում և իրականացում
- Տոնական լուսավորության նախագծեր՝
- ✓ Երևան քաղաքի տոնական լուսավորություն (2023թ., 2024թ.)
- ✓ Չարենցավան քաղաքի կենտրոնական հրապարակի տոնական լուսավորություն (2024թ.)

2012–2013թթ.
Հանրային հեռարձակողի խորհուրդ
Հառուստանախագծերի գծով խորհրդատու

2020–2021թթ.
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Լրատվական ծառայության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

- Առաջին լրատվական ալիքի տեխնիկական և աուդիո-վիզուալ մասի նախագծում և գործարկում

2018–2020թթ.
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Լրատվական հաղորդումների պրոդյուսեր

- Լրատվական ալիքի նախագծում և գործարկում
- 1lurer.am քառալեզու լրատվական կայքի գործարկում
- Նոր թղթակցային կետեր ՀՀ մարզերում և արտերկրում (թղթակցային կետերի գործարկում Ստամբուլում, Փարիզում, Բրյուսելում, Ստրասբուրգում, Բեյրութում)

Հեռուստահաղորդումներ

- «Լուրեր»
- «Հարցազրույց Պետրոս Ղազարյանի հետ»
- «Բաց հարթակ» եռալեզու հարցազրույցներ
- «Ինդեքս»

2009–2017թթ.
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Պրոդյուսեր

Սոցիալական հաղորդումներ

- «Ազատ գոտի» հ/ն
- «Առաջին տաղավար» հ/ն
- «Բարդ երկուշաբթի» հ/ն
- «Մասնագիտությունը՝ լրագրող» հ/ն

Ժամանցային, կրթական հաղորդումներ

- «Հայաստան ջան» հ/ն
- «Սպորտ՝ Գիլոյանի հետ» հ/ն
- «Ուսուցիչը» հ/ն
- «Գործից դուրս» հ/ն
- «Սիրո բանաձև» հ/ն
- «Բենեֆիս» հ/ն
- «Գուշակիր մեղեդին» հ/ն
- «Համի որակ» հ/ն

Գեղարվեստական ֆիլմեր

- «Սպանված աղավնի» հ/ֆ
- «Խաչագողի հիշատակարանը» հ/ֆ
- «Կյանքը շարունակվում է» նովելների շարք
- «Գեներալի աղջիկը» հ/u
- «Աննա» հ/u
- «Որբերը» հ/u

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

- 2021թ.մարտ – փորձի փոխանակում ռուսական առաջատար հեռուստաընկերությունների հետ (ВГТРК, RT, ORT, Moscow24):
- 2019թ. – մասնակցություն «The Open World Leadership Center»-ի նախագծին, որի նպատակն էր կազմակերպել աշխարհի մեդիա ոլորտի մասնագետների փորձի փոխանակումը և գործընկերային հարաբերությունների հաստատումը (ABC, NBC, Michigan Public Radio, Detroit Public TV):

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁ

2019թ., ԱՄՆ
Open World Leadership Center
Program: Public Broadcasting and Governance

ԼԵԶՈՒՆԵՐԻ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ՝ հայերեն, ռուսերեն

ԳՈՒՐԳԵՆ ԲԵԳԼԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁ

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ – 28.08.2023 - առ այսօր

Հայ-չինական ծրագրով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության համար 8-րդ Հեռուստաստուդիայի կառուցման ճարտարագետ-շինարար

- Իրականացնում է վերահսկողություն նախագծանախահաշվային աշխատանքների կատարողի ընտրության համար կազմակերպվող մրցույթի, նախագծանախահաշվային աշխատանքների իրականացման, նախագծանախահաշվային փաստաթղթերի տարբեր փորձաքննությունների, համաձայնեցումների, թույլտվությունների ապահովման, աշխատանքների իրականացման փուլերում միջանկյալ կամ ավարտական ակտերի, արձանագրությունների հաստատման նկատմամբ, ընդունում է աշխատանքները և այլն:
- Ապահովում է նախագծանախահաշվային փաստաթղթերի համապատասխանությունը տեխնիկական առաջադրանքին, հայկական և չինական կողմերի միջև հաստատված Դիզայն-սխեմային և չինական կողմի ներկայացրած նախագծային փաստաթղթերին:
- Իրականացնում է մասնագիտական վերահսկողություն բոլոր տեսակի (շենք-շինություններ, ենթակառուցվածքներ, օժանդակ շինություններ, բարեկարգում և այլն) շինվերանորոգման աշխատանքների նկատմամբ՝ բոլոր փուլերում (մրցութային, շինարարական, փորձաքննության, տարբեր համաձայնեցումների և թույլտվությունների ստացման, ընթացիկ և ավարտական ակտերի հաստատման, աշխատանքների ընդունման և փաստագրման և այլն):
- Պատրաստում է վերահսկման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ (պահանջվող) գրությունների, տեղեկանքների, առաջարկությունների (այդ թվում՝ լրամշակված Դիզայ-սխեմայի վերաբերյալ), լրացումների և լրամշակումների ներկայացում գրավոր և/կամ էլեկտրոնային տարբերակով:
- Իրականացնում է վերահսկողություն վերոնշյալ աշխատանքների սկիզբը, ընթացքը և/կամ ավարտը ապահովող, հավաստող, հաստատող անհրաժեշտ բոլոր՝ ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված փաստաթղթաշրջանառության (փաստաթղթերի) առկայության ապահովման նկատմամբ, անհրաժեշտության դեպքում՝ նաև կազմում և հաստատում դրանք:
- Կազմում է աշխատանքների և ծառայությունների գնման նպատակով անհրաժեշտ տեխնիկական բնութագրեր, իրականացնում է մրցութային փաստաթղթերի ձևակերպում, կազմում է գնման հայտ, ընդունում է կատարված աշխատանքների արդյունքները (ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված՝ գնման պատասխանատուի պարտականությունների կատարում):

«ՍՏԱՆԴԱՐՏ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ – 01.02.2024 – առ այսօր

- Կազմակերպության վաճառքների ցուցանիշների բարձրացում
- Թանկարժեք քարերի վաճառք
- Արտասահմանյան կազմակերպությունների հետ բանակցությունների վարում
- Պետական մարմինների հետ բանակցություններ
- Կազմակերպության տարեկան ֆին. բյուջեի, հաստիքացուցակի կազմում

«ՋԵՄՖԱԲ» ՓԲԸ – 20.12.2019 – 27.02.2024
Տնօրեն

- Կազմակերպության ռազմավարական խնդիրների իրականացում
- Արտադրական ստորաբաժանումների համակարգում
- Մարդկային ռեսուրսների կազմակերպում
- Արտադրական տեխնոլոգիաների մշակում
- Արտասահմանյան հաճախորդների հետ բանակցություններ
- Միջազգային ցուցահանդեսների տաղավարների նախագծում
- Շինարարական աշխատանքների կազմակերպում, վերահսկում
- Արտադրական և ֆինանսական ամենամսյա հաշվետվությունների ներկայացում

- Պայմանագրերի կազմում
- Կազմակերպության վաճառքների ցուցանիշների բարձրացման նպատակով նոր «գործիքների» օգտագործում

«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ – 01.02.2023 – 27.02.2024
Շինարարական ծրագրերի ղեկավար, շենքերի պատասխանատու

- Ներդրումային ծրագրերի կազմում
- Ֆինանսական մոդելների կազմում
- Ճարտարապետական և ինժեներական նախագծերի տեխնիկական առաջադրանքների կազմում
- Մրցույթների կազմակերպում
- Շինարարական աշխատանքների որակի և ժամանակացույցի համապատասխանության վերահսկում
- Պայմանագրերի կազմում
- Պետական մարմիններից թույլտվությունների ստացում
- Շենքերի սպասարկման կանոնակարգերի (ռեգլամենտների) կազմում
- Օբյեկտների շահագործման հանձնում շինարարական աշխատանքների ավարտից հետո

«ԱՆՄՈՌ» ՓԲԸ, «Վալլեքս գրուպ» խմբի ընկերություն – 01.07.2017-20.12.2019
Գլխավոր ճարտարագետ

- Արտադրական տեխնոլոգիայի մշակում
- Շինարարական աշխատանքների վերահսկում և կազմակերպում
- Արտադրության զուգահեռ և հաջորդական պրոցեսների նախագծում, կազմակերպում և վերահսկում
- Արտադրության նորմատիվ փաստաթղթերի հաստատում և մշակում
- Կազմակերպության տարեկան ֆին. բյուջեի, հաստիքացուցակի կազմում
- Արտասահմանյան գործընկերների հետ բանակցություններ, պայմանագրերի կնքում
- Միջազգային ցուցահանդեսների մասնակցության կազմակերպում
- Պետական մարմինների հետ բանակցություններ
- Դաշտային պայմաններում լեռնային ապարների մշակման տեխնոլոգիայի մշակում
- Ճարտարապետական նախագծերի ղեկավարում

«Ստանդարտ Դեվելոփմենտ» ՍՊԸ – 07.07.2016-07.06.2017
Տնօրեն

- Գնումների ընթացակարգի կազմակերպում
- Շինարարական աշխատանքների վերահսկում և կազմակերպում
- Մրցույթների մասնակցություն
- Ինժեներական նախագծերի ստուգում համաձայն ՀՀ գործող շին. նորմերի
- Կազմակերպության տարեկան ֆին. բյուջեի կազմում
- Կազմակերպության հաստիքացուցակի կազմում
- Արտասահմանյան գործընկերների հետ բանակցություններ և պայմանագրերի կնքում
- Ցուցահանդեսների մասնակցության կազմակերպում

«Յուքոմ» ՓԲԸ – 01.02.2017-01.07.2017
Ճարտարապետության և շինարարության մասով խորհրդական

- Ճարտարապետական լուծումների գնահատում
- Շինարարական աշխատանքների որակի վերահսկում
- Շինարարական աշխատանքների ժամանակացույցերի կազմում և վերահսկում
- Նախագծերի ստուգում համաձայն ՀՀ գործող շին. նորմերի
- Օդափոխության, օդորակման, գազամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի նախագծում

«Մանե Ինտերիեր» ՍՊԸ – 01.09.2015-01.03.2016
Նախագծերի ղեկավար

- Շինարարական հրապարակի կազմակերպում
- Շինարարական հրապարակում տեխնիկայի անվտանգության կանոնների վերահսկում
- Շինարարական աշխատանքների ժամանակացույցերի վերահսկում
- Պատվիրատու-կապալառու օղակների կապում
- Փաստաթղթաշրջանառության կազմակերպում
- Իրականացված աշխատանքների ընդունում-հանձնում, ծավալների ստուգում

«Հայ-ամերիկյան առողջության կենտրոն» ՓԲԸ – 01.07.2015-01.08.2016
Գլխավոր ճարտարագետ

- Ինժեներական համակարգերի սպասարկում
- Շինարարական աշխատանքների վերահսկում
- Ինժեներական մասով տարեկան բյուջեի կազմում
- Շենքի սպասարկող անձնակազմի վերապատրաստում
- Փաստաթղթաշրջանառության կազմակերպում
- Բուժ. Տեխնիկայի (CT, MRT, X-RAY) սպասարկում
- ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի հետ համատեղ չափումների և ստուգումների կազմակերպում

«Օրանժ Արմենիա» ՓԲԸ – 01.09.2014-16.04.2015
Սպասարկման ճարտարագետ

- ՀՀ տարածքում 79 խանութ-սրահների ինժեներական համակարգերի սպասարկում
- Շինարարական աշխատանքների վերահսկում
- Գլխավոր գրասենյակի ադմինիստրատիվ մասով պատասխանատու
- Ճարտարապետական նախագծերի իրականացում
- Փաստաթղթաշրջանառության կազմակերպում
- Ինժեներական սարքավորումների ներմուծում
- Խանութ-սրահների սպասարկման մասով բյուջեի կազմում

«Զևս ստուդիա» ՍՊԸ – 01.02.2014-01.05.2014
Գլխավոր ճարտարագետ

- Իրականացվող նախագծերի էկսպերտիզա
- Շինարարական աշխատանքների վերահսկում
- Գլխավոր գրասենյակի ադմինիստրատիվ մասով պատասխանատու
- Ինժեներական համակարգերի նախագծում
- Փաստաթղթաշրջանառության կազմակերպում
- Ինժեներական սարքավորումների ներմուծում
- Ինժեներական մասով բյուջեի կազմում և հսկում

«Հիմնարար հետազոտությունների կենտրոն» ՓԲԸ – 01.09.2011-01.02.2014
Սպասարկման ճարտարագետ

- Ինժեներական համակարգերի սպասարկում
- Շինարարական աշխատանքների որակի վերահսկում
- Շինարարական աշխատանքների ժամանակացույցերի կազմում և վերահսկում
- Նախագծերի ստուգում համաձայն ՀՀ գործող շին. նորմերի
- Օդափոխության, օդորակման, գազամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի նախագծում
- Մրցութային փաթեթների կազմում, մրցույթների կազմակերպում
- Հիմնական միջոցների պահեստավորում

ՊՐԱԿՏԻԿԱ

«Պորտալ» ՍՊԸ, ՌԴ ք. Մոսկվա – 30.05.2009-30.09.2009
Ճարտարապետ

- Առանձնատների նախագծում
- Շինարարական աշխատանքների վերահսկում
- Գլխավոր հատակագծերի մշակում

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԽՈՇՈՐ ՆԱԽԱԳԾԵՐՈՒՄ

- «Առողջապահության նախարարության տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» (ՊՈԱԿ) և «Բժիշկներ առանց սահմանի» (MSF) միջազգային մարդասիրական կազմակերպության հետ համատեղ՝ ՊՈԱԿ-ի գլխավոր կաթսայատան և մասնաշենքի ինժեներական համակարգերի արդիականացման նախագծի իրականացում:
- «Ռոսնեֆտ Արմենիա» ընկերության գրասենյակի ինժեներական համակարգերի նախագծում:
- «Մերիդիան» ազատ տնտեսական գոտու (54,000 ք.մ.) արտադրական, գրասենյակային և ցուցասրահների

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ճարտարապետական և ինժեներական համակարգերի նախագծում:

1997-2007թթ.
Խ.Դաշտենցի անվան թիվ 114 միջնակարգ դպրոց

2007-2011թթ.
Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, տրանսպորտի ֆակուլտետ
Թեզի թեմա՝ «Հյուսիս-հարավ միջպետական ավտոճանապարհի Գյումրի քաղաքի շրջանցիկ հանգույցի նախագծում»:

2011-2013թթ.
Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան
Թեզի թեմա՝ «Սողանքային տեղամասերում ավտոմոբիլային ճանապարհների և կամուրջների նախագծում և իրականացում»:

ԼԵԶՈՒՆԵՐԻ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայերեն՝ մայրենի
Ռուսերեն՝ գերազանց
Անգլերեն՝ լավ

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Microsoft Office Package, AutoCAD, Corel Draw, ArchiCAD, Photoshop, Credo, SAP

ՄԱՆԳԱՍԱԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ			
Ուսումնական հաստատության անվանումը	**Ուսումնառության տարեթիվը**	**Ֆակուլտետ**	**Մասնագիտություն**
Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (ՀՊՃՀ)	2002 – 2007 թթ.	Տրանսպորտ	Փոխադրումների կազմակերպումը և կառավարումը տրանսպորտում
Դիպլոմային աշխատանքի թեման՝ «10» համարի երթուղային տաքսու երթուղու բարելավվում			

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁ					
Տարեթիվը սկիզբը-ավարտը		**Կազմակերպության անվանումը**	**Գտնվելու վայրը**	**Հեռախոսի համարը**	**Պաշտոնը**
2024 -առ այսօր		«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	Երևան, Գ. Հովսեփյան 26	010650015 /422/	Հայ-չինական ծրագրով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության համար 8-րդ հեռուստաստուդիայի կառուցման տնտեսական աշխատանքների համակարգող
2023	2023	ՀՀ կադաստրի կոմիտեի «Շենգավիթ» ՍԳ	Երևան Մանանդյան 33	060 474162	ՀՀ կադաստրի կոմիտեի «Շենգավիթ» սպասարկման գրասենյակի ղեկավար
2022	2023	Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջան	Երևան, Նուբարաշենի 9-րդ փողոց հ. 4	011 518730	Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի առևտրի և գովազդի բաժնի պետ
2021	2022	Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջան	Երևան, Նուբարաշենի 9-րդ փողոց հ. 4	011 518730	Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ
2020	2021	Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջան	Երևան, Նուբարաշենի 9-րդ փողոց հ. 4	011 518730	Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ
2015	2020	«ՄՈՒԱՏ» ՓԲԸ	Երևան, Բագրատունյաց 42	010 482150	Ինժիներ-մեխանիկ
2012	2014	Շինարարական կազմակերպություն	Կիև, Ուկրաինա	_	Կազմակերպչական մասով բաժնի պետ
2011	2012	Ֆինոռոստբանկ	Կիև, Ուկրաինա	_	Դեպոզիտային բաժնի մասնագետ
2011	2011	«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ	Երևան, Գ.Լուսավորիչ 13	012 222222	Վարկային մասնագետ
2009	2011	«ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ	Երևան, Արամի 82-84	010 318888	Վարկային գործակալ
Աշխատանքային պարտականությունների հակիրճ նկարագրությունը՝ վարկային հայտերի ընդունում և խորհրդատվություն, հաճախորդի տնտեսության վերլուծություն, ընթացիկ մոնիտորինգների իրականացում, խնդրահարույց վարկերի հավաքագրում: Նոր հաճախորդների ներգրավում և սպասարկում:					

ԼԵԶՈՒՆԵՐԻ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ						
	Գրել			Խոսել		
	գերազանց	լավ	բավարար	գերազանց	լավ	բավարար
Հայերեն	☒	☐	☐	☒	☐	☐
Ռուսերեն	☐	☒	☐	☐	☒	☐
Անգլերեն	☐	☒	☐	☐	☒	☐

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄ			
	Գերազանց	Լավ	Բավարար
Microsoft Office Excel	☐	☒	☐
Microsoft Office Word	☐	☒	☐